



# «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ընտանիքի հոգեբանություն: Կոնֆլիկտներ*

Առարկան՝ *Հայոց լեզու*

Հետազոտող ուսուցիչ՝ *Չոբանյան Աննա*

Ուսումնական հաստատություն՝ *Արա Հարությունյանի անվ. հ.49  
հիմնական դպրոց*

Երևան 2022

## *Կ ա ո ու ց վ ա ծ ք ը*

1. Տիտղոսաթերթ
2. Բովանդակություն
3. Ներածություն
4. Ընդհանուր հետազոտություն
5. Եզրակացություն
6. Գրականության ցանկ

## *Ընտանիքի հոգեբանություն*

### *Կոնֆլիկտներ*

#### *Ներածություն*

Այս թեման արդիական է, քանզի ուսուցումը յուրահատուկ եռանկյունի է, որի անկյուններն են աշակերտը, ուսուցիչը և ծնողը: Յուրաքանչյուր աշակերտ դպրոց է գալիս իր ընտանիքից, որն ինքնատիպ է և իր ուրույն դրոշմն է դնում աշակերտի հոգեկերտվածքի վրա:

Որպես երկար տարիների դասուցիչ՝ իմ բազմամյա փորձի ընթացքում բախվել եմ աշակերտների՝ ընտանիքից եկող տարաբնույթ խնդիրների, որոնք լուրջ խորհելու տեղիք են սովել: Ուստի որոշեցի հետազոտական աշխատանք ընտրել հենց այս թեման, որ եզրակացության արդյունքում գալով եզրահանգման՝ փորձեմ օգնել աշակերտին, ով հաճախ գտնվում է խնդրահարույց իրավիճակում:

Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ՝ ընտանիքը փոխվում է հասարակության զարգացման ու փոփոխության գուրընթաց:

Ընտանիքը պետության հոգատարությամբ շրջապատված հասարակական օրգանիզմ է, որը գուրակցում է մարդկանց անձնական շահերը և նպաստում հասարակարգի և պետության կայունությանը: Ներկա ժամանակաշրջանում պետությունը շահագրգռված է ստեղծել ամուր, համերաշխ ընտանիք, քանի որ ընտանիքի կայունությունը նպաստում է հասարակարգի և պետության կայունացմանը:

Ընտանիքը հասարակության մի մասնիկն է: Նրա կարևորագույն մասերից է օրենսդրությունը: Օրենսդրության մեջ գոյություն ունի ընտանեկան իրավունք, որտեղ օրենքը որոշում է ընտանիքում կնոջ, ամուսնու, երեխաների և ծնողների դերը, իրավունքներն ու պարտականությունները:

Ընտանիքը՝ որպես հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ, տարբերվում է սովորական սոցիալական խմբերից: Ընտանիքում գոյություն ունեն հոր, մոր և զավակների կարգավիճակներ, դերեր, իրավունքներ ու պարտականություններ: Ընտանիքի կայացման համար մեծ նշանակություն ունի երիտասարդ սերնդի նախապատրաստումը ամուսնական կյանքին:

Ընտանիքի ամրության համար պետք է հաշվի առնել անդամների անհատական պահանջմունքների դերի կարևորությունը, որը ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում պետք է ուշադրության կենտրոնում պահել ընտանիքի անդամների պահանջմունքների խնդիրը:

### *Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը*

#### *Երեխայի անձի ձևավորման վրա*

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ:

Երեխայի անձի զարգացումը առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերությունները էական փոփոխությունների են ենթարկվել, ավելացել է ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը, փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

### **Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում:**

Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես «Մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ» (4, էջ 45):

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ «Կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների կարծիքների, հայացքների բախում է» (5, էջ 212):

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ստոյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հասկացություն. «Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով» (6, էջ 294):

Ըստ վիճակագրական տվյալների՝ ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացողության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող է հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքը սերն է:

Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա՝ ուսումնասիրություն ենք կատարել՝ պարզելու, թե ո՞ր ընտանիքներում են առավել շատ կոնֆլիկտներ լինում՝ փո՞քր (ծնողներ և երեխաներ), թե՞ ընդլայնված (ծնողներ, երեխաներ և այլ հարազատներ):

Պարզվում է, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն առավել հաճախ են ծագում, քան փոքր ընտանիքներում (10 – 12 % - ով):

Կոնֆլիկտները կարող են լինել՝

1) ամուսնական զույգի միջև:

Այստեղ պատճառ կարող է հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի «ծանր» բնավորությունը, սեռական հարցերը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը և ֆինանսական խնդիրները:

Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով:

I ճգնաժամը հանդես է գալիս ամուսնության I տարում, հատկապես, երբ երեխա է ծնվում:

II –ը՝ ամուսնության 3 – 7 –րդ տարում:

III – ը՝ 17 – 27 –րդ տարում:

Ընտանիքում կոնֆլիկտների պատճառները կարող են լինել բազմաթիվ ու բազմաբնույթ:

Դրանք բացասաբար են անդրադառնում ամուսինների հոգեբանական աշխարհի վրա, արդյունքում թուլանում է կին–տղամարդ կապը, որը անպայման իր բացասական կնիքն է դնում երեխաների վրա:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտային աստիճանը: Դրանք են՝

Ներքոտիկ ընտանիքներ, որտեղ գերիշխում է տազնապայնության բարձր մակարդակ, ազրեսիվություն ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, փոխզիջումների չեն գնում պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում, մշտական վեճերն ու կոնֆլիկտները ազդում են ն՝ ծնողների , ն՝ երեխաների հոգեկան վիճակների ու առողջության վրա:

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, թե ինքն է կոնֆլիկտի պատճառը: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է վախի զգացում առաջանալ: Սա նկատվում է, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարաններին: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի վախի զգացումով, լինում են մեկուսացված ու անհանգիստ, կարող են ունենալ նյարդային հոգեամատիկ և այլ հիվանդություններ:

Կան երեխաներ էլ, որոնց համար կոնֆլիկտը դառնում է սովորական երևույթ: Հետո՝ հասուն տարիքում, այդ նույն անտարբերությունը նրանք դրսևորում են իրենց շրջապատի նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում են ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերությունների պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

### ***Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում***

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չզիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցնելն

ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում հատկապես դեռահասության տարիքում: Սա պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր և որդիներ» խնդիրը: Մի կողմից դեռահասը սկսում է համեմատել «իդեալական ծնողի» իր պատկերացումները իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա իրականի և իդեալականի միջև, մի դեպքում էլ դեռահասն իրեն մեծ է համարում և շրջապատից ակնկալում է նման վերաբերմունք: Բոլոր դեռահասներն ունեն այս ձգտումը: Այն ծնողները ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքում ծնող – երեխա հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների:

Այս հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի՝ նրան քիչ խրախուսելով, պատժելով, կոպիտ վարվելով, որոնք առաջացնում են ծայրահեղ դրսևորումներ: Երեխան մեծանում է չարացած, ազդեսիվ կամ անվստահ բարդությավորված:

### ***Կոնֆլիկտ երեխա - երեխա հարաբերություններում***

Սրանց պատճառները մի քանիսն են:

I) Երեխայի նկատմամբ ուշադրության պակասը: Որպես կանոն՝ երկրորդ երեխայի ծնունդը առաջնեկի մոտ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնունդից հետո ծնողները պետք է կարողանան պատշաճ ուշադրություն դրսևորել առաջնեկի նկատմամբ:

Միայն ծնողից է կախված երեխա – երեխա հարաբերությունների բնույթը:



II ) Ծնողների կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է:

Հայ ընտանիքում երբեմն ծնողները սերը «բաժանում են» մայրերը սիրում են տղաներին, հայրերը՝ աղջիկներին, որն էլ պատճառ է դառնում երեխաների միջև հակակրանքի :

### ***Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ***

Եթե համեմատենք «փոքր» և «մեծ» ընտանիքներին, ապա մեծ կամ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որ չեն կարող լինել «փոքրում»:

Հայկական ընտանիքում ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և ապրում է հայրական ընտանիքում, որտեղ բացի ծնողներից ապրում են եղբայրներ, քույրեր և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ:

Սովորաբար բազմանդամ ընտանիքներում առավել հաճախ կոնֆլիկտը առաջանում է հարազատների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտի պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորությունների և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն:

Կոնֆլիկտներ են առաջանում ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ են գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցեր:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վարկաբեկում ու վիրավորում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը:

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որ մշտապես

գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է «ծանր» բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. Կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջանալու դեպքում դրանց արագ լուծում տալ:
2. Ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ՝ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար:
3. Բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխաների, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

## *Գրականություն*

1. Մեղրապյան Ս. Ա. «Հնտանիքի հոգեբանություն»: Եր. 2010թ.
2. Ильин Е. П. «Дифференциальная психофизиология мужчины и женщины», Питер 2003г.
3. Лобан Н. А. «Конфликтология» - Минск – 2008г.
4. Ребус Б. М. «Психологические основы управления школой» - Ставрополь -1990г.
5. Сергрийчук А. В. «Соцология управления»: бизнес пресс 2002г.
6. Столяпенко А. М. «Общая и профессиональная психология» - Москва – 2003г.